Պայմանագիր No. /Օրինակ/
Պահնորդական ծառայությունների մատուցման մասին

ք. Երևան **-ը ********, 2021թ.

«Յուքոմ» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Արա Խաչատրյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «**Պատվիրատու**»), մի կողմից, և

«*******» ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն **********, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «**Կատարող**»), մյուս կողմից,

(այսուհետ միասին՝ «Կողմեր», իսկ առանձին՝ «**Կողմ**»),

կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ «**Պայմանագիր**» կամ «**սույն Պայմանագիր**») հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին մատուցել սույն Պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները (այսուհետ՝ «**Ծառայություն**» կամ «**Ծառայություններ**»), իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրանց դիմաց սույն Պայմանագրի 3-րդ կետով սահմանված չափով, կարգով և ժամկետներում:

1.2 Սույն Պայմանագրով Կատարողը պարտավորվում է մատուցել պահնորդական ծառայություն Պատվիրատուի վաճառքի և սպասարկման կենտրոններում, տվյալների կենտրոններում, պահեստային և այլ տարածքներում (այսուհետ՝ «**Օբյեկտ**» կամ «**Օբյեկտներ**»), որոնց ցանկը ներկայացված է սույն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 2-ում:

1.3 Կատարողը Ծառայությունները մատուցում է իր աշխատակիցներ հանդիսացող պահնորդների միջոցով, որոնց հիմնական և աշխատանքային պարտավորությունները սույն Պայմանագրի շրջանակներում սահմանվում են սույն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ում:

2. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Կատարողը Ծառայությունների մատուցումը կազմակերպում և իրականացնում է Պատվիրատուի հետ համաձայնեցված և հաստատված կարգով ու պայմաններով, Օբյեկտում սահմանված՝ Պատվիրատուի ներօբյեկտային, անցագրային և այլ ներքին կանոնակարգերին համապատասխան:

2.2 Աշխատանքային ժամերին Պատվիրատուն Կատարողին է միացնելու ահազանգման համակարգի կոճակը, իսկ ոչ աշխատանքային ժամերին՝ ահազանգման համակարգը:

2.3 Կատարողը պետք է ունենա Ծառայության յուրաքանչյուր տեսակի համար պահնորդների հրահանգավորում/ծառայության վայրի ընթացակարգ, որը համաձայնեցվում է Պատվիրատուի անվտանգության բաժնի հետ և հաստատվում է վերջինիս կողմից:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ /բանակցային/

---

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 **Կատարողն իրավունք ունի՝**

4.1.1 պահանջել Պատվիրատուից ստեղծելու Օբյեկտի անվտանգությանն առնչվող անհրաժեշտ և բավարար պայմաններ՝ Ծառայությունները պատշաճ որակով մատուցելու համար,

4.1.2 սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման ընթացքում անվճար օգտվել Օբյեկտում առկա կոմունալ հարմարություններից (էլեկտրաէներգիա, ջուր, ջեռուցում և այլն),

4.1.3 իր կողմից Օբյեկտի ամբողջականության խախտման նշանների հայտնաբերման դեպքում պահանջել Պատվիրատուի անվտանգության բաժնի լիազոր ներկայացուցչից խախտման վայր ներկայանալ՝ ի հայտ եկած թերությունները պարզելու և դրանք վերացնելու համար:

4.2 **Կատարողը պարտավոր է՝**

4.2.1 սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան կազմակերպել և ապահովել Օբյեկտի և իր պահպանությանն հանձնված ապրանքանյութական արժեքների պահպանությունը,

4.2.2 ապահովել Օբյեկտում կարգուկանոնի և անվտանգության պահպանությունը՝ նախազգուշացնելով և կանխելով Պատվիրատուի կողմից Օբյեկտում սահմանված անցագրային, ներօբյեկտային և այլ ներքին կանոնակարգերի խախտմանն ուղղված ցանկացած անօրինական գործողություն,

4.2.3 սահմանված կարգով Պատվիրատուից ընդունել իր պահպանությանը հանձնվող բանալիները և կապարակնիքները,

4.2.4 Օբյեկտում Ծառայություն մատուցող իր աշխատակից-պահնորդներին իր հաշվին ապահովել համապատասխան համազգեստով,

4.2.5 գրավոր զեկուցել Պատվիրատուի անվտանգության բաժնի ներկայացուցչին Ծառայությունների մատուցման ընթացքում ի հայտ եկած ներօբյեկտային, անցագրային և այլ ներքին կանոնակարգերի ցանկացած շեղումների և խախտումների վերաբերյալ, ինչպես նաև Պատվիրատուին տեղեկացնել այն բոլոր հանգամանքների վերաբերյալ, որոնք կարող են բացասաբար ազդել Օբյեկտի պահպանության ապահովման կամ իր կողմից սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան Ծառայությունների մատուցման վրա,

4.2.6 գողության կամ հանրորեն վտանգավոր այլ արարքի, ինչպես նաև տեխնիկական վթարների հետևանքով Պատվիրատուին և/կամ Օբյեկտին պատճառած նյութական վնասի չափը որոշելու համար մասնակցել ապրանքանյութական արժեքների հաշվարկմանը,

4.2.7 պահպանել Ծառայությունների մատուցման ընթացքում իրեն հայտնի դարձած՝ Պատվիրատուի ծառայողական, բանկային կամ այլ գաղտնիք պարունակող տեղեկությունները, չհրապարակել կամ այլ կերպ երրորդ անձանց համար հնարավորություն չստեղծել ծանոթանալու դրանց (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի):

4.3 **Պատվիրատուն իրավունք ունի.**

4.3.1 ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից իրականացվող աշխատանքների ընթացքը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

4.3.2 ստուգման ընթացքում Ծառայության մատուցման պայմանների խախտումներ հայտնաբերելու դեպքում տեղեկացնել այդ մասին Կատարողին և պահանջել անհապաղ վերացնել խախտումները,

4.3.3 պահանջել Կատարողից փոխարինել Օբյեկտի պահպանությունն իրականացնող պահնորդներին,

4.3.4 պահանջել Կատարողից չթույլատրել և կանխել կողմնակի անձանց մուտքը Օբյեկտ և/կամ սարքավորումների անօրինական ներկրումը և/կամ դուրս բերումը Օբյեկտ,

4.3.5 պահանջել Կատարողից թույլատրել կողմնակի անձանց մուտքը և ելքը Օբյեկտի տարածք միայն Պատվիրատուի կողմից հաստատված կարգով՝ Պատվիրատուի տնօրինության կամ անվտանգության բաժնի պատասխանատու անձի թուլտվության հիման վրա,

4.3.6 պահանջել Կատարողից անմիջապես Պատվիրատուին հայտնել Օբյեկտում ցանկացած պատահարների մասին, իսկ Պատվիրատուի պահանջի դեպքում՝ հայտնել համապատասխան իրավասու մարմիններին,

4.3.7 պահանջել, որպեսզի Կատարողը սույն Պայմանագրի սահմաններում հնարավոր բոլոր միջոցները ձեռնարկի ներօբյեկտային, անցագրային և այլ ներքին կանոնակարգերի ցանկացած խախտումները, ինչպես նաև Օբյեկտում ցանկացած պատահարները կանխելու համար:

4.3.8 պառնվազն ամիսը 1 (մեկ) անգամ Կատարողին 24 ժամ առաջ տեղյակ պահելով անցկացնել անվտանգության համակարգերի փորձարկումներ և ստուգումներ:

4.4 **Պատվիրատուն պարտավոր է.**

4.4.1 աջակցել Կատարողին իր պարտականությունների կատարման ընթացքում առաջացած չկանխատեսված արգելքները վերացնելու համար,

4.4.2 տեղեկացնել իր աշխատակիցներին և/կամ Օբյեկտի տարածքն օգտագործող անձանց Օբյեկտում գործող ներօբյեկտային, անցագրային և այլ ներքին կանոնակարգերի մասին,

4.4.3 Կատարողին տեղեկացնել Օբյեկտի տարածքն օգտագործող կազմակերպությունների, անձանց մասին,

4.4.4 Կատարողի աշխատակից-պահնորդներին ծանոթացնել Օբյեկտում տեղադրված և շահագործվող սարքավորումների անվտանգության տեխնիկայի կանոններին, ինչպես նաև տեխնիկական այն համակարգերին, որոնց պետք է հետևել սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման ժամանակ, նրանց տրամադել անհրաժեշտ տեղեկատվություն՝ կենսաապահովման համակարգերի խափանումների դեպքում տեխնիկական պատասխանատուներին տեղեկացնելու համար,

4.4.5 Կատարողին նախազգուշացնել Օբյեկտի հիմնական վերանորոգման և վերասարքավորման, սահմանված աշխատանքային ժամերի, գործունեության պրոֆիլի փոփոխման կամ այնպիսի միջոցառումների անցկացման մասին, որոնց հետևանքով հնարավոր է Օբյեկտի պահպանության բնույթի փոփոխություն կամ պահակակետերի տեղաբաշխման անհրաժեշտություն,

4.4.6 անհրաժեշտության դեպքում միջոցներ ձեռնարկել Օբյեկտի տեխնիկական ամրացվածության վիճակի հետազոտման մասին՝ Կատարողի կողմից կազմված ակտերում արձանագրված թերությունները վերացնելու ուղղությամբ,

4.4.7 Կատարողի աշխատակից-պահնորդների համար ապահովել Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ պայմաններ, ստեղծել պայմաններ կոմունալ և այլ նմանատիպ հարմարություններից (ծառայություններից) օգտվելու համար,

4.4.8 Օբյեկտը Կատարողից ընդունելիս հանցագործության կատարման կամ դրա ամբողջականության խախտման կասկած հարուցող հետքերի և նշանների առկայության մասին անմիջապես հայտնել Կատարողին և համապատասխան իրավապահ մարմիններին: Մինչև իրավապահ մարմինների ժամանումը թույլ չտալ դեպքի վայրի պատկերը խախտելու կամ այն վերափոխելու որևէ գործողություն,

4.4.9 Կատարողի մոտ աշխատող և/կամ վերջին 1 (մեկ) տարվա ընթացքում աշխատած աշխատակից/ներ/ին չընդունել իր մոտ աշխատանքի առանց Կատարողի համաձայնության,

4.4.10 Կատարողին 3 (երեք) աշխատանքային օր առաջ գրավոր տեղեկացնել լրացուցիչ պահնորդների ներգրավման, Ծառայության լրացուցիչ ժամերի ավելացման կամ պահնորդների քանակի կամ Ծառայության ժամերի կրճատման անհրաժեշտության մասին,

4.4.11 իր կողմից նշանակել պատասխանատու անձանց, տրամադրել նրա/նրանց հետ կապ հաստատելու համար անհրաժեշտ տվյալներ (գտնվելու, բնակվելու վայրի հասցե/ներ, հեռախոսի համար/ներ): Պատասխանատու անձի փոխվելու դեպքում 3 (երեք) աշխատանքային օր առաջ պատշաճ կարգով տեղեկացնել Կատարողին այդ մասին, ներկայացնել նոր պատասխանատու անձին և տրամադրել վերջինիս վերաբերյալ անհրաժեշտ տվյալներ,

4.4.12 վճարել Կատարողին սույն Պայմանագրով նախատեսված չափով, կարգով և ժամկետներում:

5. ՀԱՍՑՎԱԾ ՎՆԱՍԻ ՉԱՓԸ ՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1 Ծառայությունների մատուցման ընթացքում Օբյեկտում կատարված գողության կամ հանրորեն վտանգավոր այլ արարքների հետևանքով Պատվիրատուի գույքի կամ ապրանքանյութական արժեքների հափշտակման, ոչնչացման կամ վնասման (ներառյալ՝ հրկիզման միջոցով)/ դեպքում, Պատվիրատուի և Կատարողի մասնակցությամբ պետք է կազմվի միացյալ հանձնաժողով՝ համատեղ հետաքննություն անցկացնելու և համապատասխան գործողություններ իրականացնելու համար:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Եթե գումարի վճարումը Պատվիրատուի կողմից չի իրականացվում սահմանված ժամկետում, ապա Կատարողը կարող է Պատվիրատուից պահանջել վճարել տուգանք չվճարված գումարի 0.1%-ի (զրո ամբողջ մեկ տասնորդական տոկոսի) չափով՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար:

6.2 Կատարողը պատասխանատվություն չի կրում այն վնասի համար, որն առաջացել է Պատվիրատուի մեղքով, սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունները Պատվիրատուի կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով կատարելու հետևանքով:

6.3 Կատարողը պատասխանատվություն է կրում միայն այն իրական վնասի համար, որը նրա կողմից Պատվիրատուին և/կամ Օբյեկտին պատճառվել է (Պատվիրատուի կողմից Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ պայմանները և հնարավորություններն ապահովված լինելու դեպքում) Օբյեկտի անհրաժեշտ պահպանություն չիրականացնելու հետևանքով:

6.4 Պատվիրատուին և/կամ Օբյեկտին պատճառված վնասի չափը համատեղ որոշելուց հետո Կատարողը Պատվիրատուին պատճառված վնասը պետք է փոխհատուցի վնասների փոխհատուցման հաշիվը ներկայացնելուց հետո՝ 14 (տասնչորս) աշխատանքային օրվա ընթացքում:

6.5 Կատարողը կարող է Պատվիրատուի համաձայնությամբ Պատվիրատուին և/կամ Օբյեկտին պատճառված վնասը փոխհատուցել՝ Պատվիրատուին վճարելով այն գույքի արժեքը, որին վնաս է հասցվել կամ այդ գույքին համանման մեկ ուրիշ գույք տրամադրելով Պատվիրատուին:

6.6 Կատարողի կողմից սույն Պայմանագրով սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի պահանջել Կատարողից վճարել տուգանք՝ 600,000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, յուրաքանչյուր այդպիսի խախտման դեպքի համար:

7. ԵՐԱՇԽԻՔՆԵՐ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7.1 Կատարողը հայտարարում և երաշխավորում է, որ՝

7.1.1 օժտված է սույն Պայմանագիրը կնքելու և կատարելու բոլոր իրավասություններով,

7.1.2 սույն Պայմանագրի կնքումը և դրանով նախատեսված պարտականությունների կատարումը չի խախտում և հետագայում չի խախտի որևէ այլ Պայմանագիր, որի կողմ է հանդիսանում Կատարողը կամ որի դրույթներն այլ կերպ պարտադիր են վերջինիս համար,

7.1.3 ունի անհրաժեշտ և բավարար ռեսուրսներ, միջոցներ և որակավորված անձնակազմ սույն Պայմանագիրը կատարելու և Ծառայությունները սահմանված ժամկետներում մատուցելու համար,

7.1.4 ունի սույն Պայմանագրով սահմանված Ծառայությունները մատուցելու համար ՀՀ օրենսդրությամբ պահանջվող բոլոր թույլտվությունները և լիցենզիաները,

7.1.5 Ծառայությունների մատուցման ընթացքում կգործի ողջամիտ և բարեխղճորեն՝ ի շահ Պատվիրատուի:

7.2 Սույն Պայմանագրի 7.1. կետում նշված երաշխիքները և հայտարարությունները խախտելու դեպքում Կատարողը պարտավոր է Պատվիրատուին հատուցել այդպիսի խախտմամբ վերջինիս պատճառված վնասներն ամբողջությամբ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

8.1 Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, հրդեհը, ջրհեղեղը,

պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով Կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել սույն Պայմանագիրը՝ այդ մասին նախապես գրավոր տեղյակ պահելով մյուս Կողմին:

8.2 Անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով սույն Պայմանագրի գործողության դադարեցման դեպքում Պատվիրատուն պարտավորվում է վճարել սույն Պայմանագրի դադարեցման պահի դրությամբ փաստացի մատուցված Ծառայությունների արժեքը:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահին:

9.2 Պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց 30 (երեսուն) օր առաջ Կողմերից որևէ մեկի կողմից Պայմանագրի գործողությունը դադարեցնելու մասին մյուս Կողմին գրավոր ծանուցում չուղարկելու դեպքում Պայմանագրի գործողության ժամկետը յուրաքանչյուր անգամ երկարաձգվում է հերթական 1 (մեկ) տարի ժամկետով:

9.3 Սույն Պայմանագրի բոլոր լրացումները և փոփոխությունները կատարվում են Կողմերի գրավոր համաձայնությամբ:

9.4 Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ միակողմանի հրաժարվել սույն Պայմանագիրը կատարելուց՝ 30 (երեսուն) օր առաջ այդ մասին գրավոր տեղեկացնելով Կատարողին և նրան վճարելով տվյալ ամսվա ընթացքում փաստացի մատուցված Ծառայությունների համար:

9.5 Կատարողն իրավունք ունի հրաժարվել սույն Պայմանագիրը կատարելուց՝ 30 (երեսուն) օր առաջ այդ մասին գրավոր տեղեկացնելով Պատվիրատուին:

9.6 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում դատական կարգով:

9.7 Սույն Պայմանագիրը կազմված է 2 (երկու) հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակներից: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

9.8 Սույն Պայմանագրով չկարգավորված բոլոր հարցերը ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ **«Յուքոմ» ՓԲԸ**	**ԿԱՏԱՐՈՂ՝** **«********» ՍՊԸ**
Գլխավոր տնօրեն՝ **Արա Խաչատրյան**	**Տնօրեն՝**
_____	_____

1. ԿԱՆՈՆԱՎՈՐ ՊԱՀՆՈՐԴՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1. Պահնորդների հիմնական պարտավորություններն են.

- ծառայել որպես պատվար ընդդեմ հանցագործությունների և կանխարգելել իրավախախտումները պահպանվող Օբյեկտում և նրա տարածքային կառույցներում՝ շարունակական պահնորդություն իրականացման միջոցով,
- կազմել և Պատվիրատուին ներկայացնել ճիշտ և հակիրճ զեկուցագրեր՝ ներառյալ, բայց չսահմանափակվելով, Օբյեկտում գողության դեպքերի, միջադեպերի, պատահարների, հրդեհի և ներօբյեկտային կարգուկանոնն ու անվտանգությունը խախտող այլ դեպքերի վերաբերյալ տեղեկություններով,
- ապահովել, որպեսզի Օբյեկտի տարածքում բոլոր անձինք դրսևորեն պատշաճ պահվածք և չխախտեն Օբյեկտում Պատվիրատուի աշխատակիցների բնականոն աշխատանքը և Օբյեկտի գործունեության կանոնավոր ընթացքը:

1.2. Պահնորդների աշխատանքային պարտականություններն են.

- քաջատեղյակ լինել Օբյեկտի տարածքին և տարածքային կառույցներին Պատվիրատուի անվտանգության բաժնի պատասխանատու անձին/անձանց անհապաղ զեկուցել որևէ անսովոր կամ կասկածելի վարքագիծ նկատելու մասին,
- իրականացնել Օբյեկտի տարածքի և տարածքային կառույցների կանոնավոր պարեկություն՝ գրանցելով ցանկացած խնդիր կամ անսովոր գործունեություն,
- հետևել անվտանգության ստանդարտ գործընթացների պահպանմանը, որոնք ներառում են Պատվիրատուի աշխատակիցների մուտքի/ելքի կանոնները, բանալիների հաշվառումը, այցելուների գրանցումը, ավտոմեքենաների հաշվառումը, հաճախորդների կողմից կարգուկանոնի պահպանմանը հետևելը և այլն,
- արագ արձագանքել և գրանցել ներօբյեկտային կարգուկանոնին և անվտանգությանը սպառնացող ցանկացած վտանգ և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել դրանց վերացման համար,
- արտակարգ իրավիճակների դեպքում օժանդակել պահպանվող Օբյեկտի կազմակերպչական աշխատանքներին՝ ըստ Օբյեկտի արտակարգ իրավիճակների պլանի և/կամ Պատվիրատուի կողմից պահանջված որևէ այլ եղանակով,
- օբյեկտի անվտանգության և կարգուկանոնի ցանկացած և բոլոր խախտումների դեպքում մանրամասն զեկույց ներկայացնել Պատվիրատուի անվտանգության բաժնի պատասխանատու անձանց,
- հսկողություն իրականացնել Օբյեկտի բանալիների ապահով պահպանության նկատմամբ: Օբյեկտի բանալիները կարող են տրվել միայն Պատվիրատուի լիազորված աշխատակիցներին,
- կանխարգելել չլիազորված կողմնակի անձանց մուտքն ու ելքը Օբյեկտի տարածք և ուշադիր հետևել կասկած հարուցող անձանց,
- Ծառայության ներկայանալ ժամանակին սափրված, մաքուր և կոկիկ հագնված, համապատասխան համազգեստով,
- Ծառայության ընթացքում արգելվում է զբաղվել բջջային հեռախոսներով կամ աշխատանքի հետ կապ չունեցող ցանկացած այլ զբաղմունքով, որը կարող է խոչընդոտել պահնորդի պարտականությունների կատարմանը,
- ընդունել և արագ արձագանքել Օբյեկտի անվտանգությանը սպառնացող կանչերին, ինչպիսիք են, օրինակ, կարգուկանոնի խախտումները, անցանկալի այցելուները, հաճախորդի ոչ պատշաճ կամ իրավախախտ վարքագիծը և այլն, նման դեպքերում կիրառել անհրաժեշտ տեխնիկական միջոցներ, ձեռնարկել անմիջական գործողություններ,
- 1 (մեկ) ժամ ընդհանուր տևողությամբ ընդմիջման գնալ միայն Օբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող անձի հետ համաձայնեցված կարգով և այդ մասին Կատարողի ահազանգերի հեռահար մոնիթորինգի կենտրոնին տեղեկացնելու պայմանով:

2. ԱՀԱԶԱՆԳԵՐԻ ՀԵՌԱՀԱՐ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

- Օբյեկտում անվտանգության համակարգի և/կամ ահազանգման ոտնակի (կոճակի) յուրաքանչյուր ակտիվացման դեպքում, Կատարողի արագ արձագանքման խումբը պարտավոր է առավելագույնը 7-10 րոպեի ընթացքում ժամանել Օբյեկտ և անմիջապես զանգահարել Կատարողի շուրջօրյա հեռահար մոնիթորինգի և արագ արձագանքման կենտրոն և զեկուցել ժամանման պահին առկա վիճակը: Նշված զանգի կատարման միջոցով կֆիքսվի արագ արձագանքման խմբի ժամանման պահը: Կատարողի շուրջօրյա հեռահար մոնիթորինգի աշխատակիցն անմիջապես պետք է կապ հաստատի Պատվիրատուի 24/7 անվտանգության օպերատիվ կառավարման կենտրոն և/կամ Պատվիրատուի անվտանգության բաժնի պատասխանատու անձին՝ ներկայացնելով իրավիճակը և պետք է հետևի

Պատվիրատուի կողմից տրված հրահանգներին և ցուցումներին՝ խստորեն հետևելով սույն Պայմանագրով և կից հավելվածով սահմանված ընթացակարգերին:

- Կատարողը կրում է նյութական պատասխանատվություն սահմանված՝ առավելագույնը 7-10 րոպեի ընթացքում ահազանգող Օբյեկտ ժամանելու, Պատվիրատուի կողմից տրված հրահանգներին, ցուցումներին, սույն Պայմանագրով և կից հավելվածով սահմանված ընթացակարգերին հետևելու իր պարտավորության յուրաքանչյուր խախտման դեպքի համար:
- Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունների խախտման դեպքում, երբ տեղի է ունեցել Պատվիրատուի գույքի վնասում, ոչնչացում կամ կորուստ (հրդեհ, վանդալիզմ, գողություն և այլն), ապա Կատարողը պարտավոր է վճարել փոխհատուցում պատճառված վնասների համար, բայց ոչ ավելի քան 1,500,000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ յուրաքանչյուր դեպքի համար:
- Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունների խախտման դեպքում, երբ Պատվիրատուի գույքի վնասում, ոչնչացում կամ կորուստ չի արձանագրվել, սակայն տեղի է ունեցել Կատարողի կողմից պարտավորությունների խախտում, ապա Պատվիրատուն իրավունք ունի Կատարողից պահանջել վճարել տույժ ուշացման համար՝ Հավելված 2-ով սահմանված Ծառայության տվյալ տեսակի համար վճարման ենթակա գումարի կրկնապատիկի չափով՝ սկսած ուշացման 11-րդ րոպեից:
- Այն դեպքում, երբ Կատարողի կողմից սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարվել են պատշաճ, սակայն արդեն իսկ առկա են կորուստներ կամ վնասներ, ապա Կատարողը պատասխանատվություն չի կրի մինչև իր ժամանման պահն առաջացած կորուստների կամ վնասների համար: Միաժամանակ Կատարողը պարտավոր է հնարավոր բոլոր միջոցները ձեռնարկել վնասները և կորուստները սահմանափակելու (նվազեցնելու) և/կամ դրանց առաջացման աղբյուրը չեզոքացնելու ուղղությամբ: Կատարողի կողմից սույն պարտավորության չկատարման կամ թերի կատարման դեպքում Կատարողը պարտավոր է վճարել փոխհատուցում իր անգործության հետևանքով պատճառված վնասի համար, բայց ոչ ավելի քան 1,500,000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ յուրաքանչյուր դեպքի համար:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ **«Յուքոմ» ՓՅԸ**	**ԿԱՏԱՐՈՂ՝** **«***********» ՍՊԸ**
Գլխավոր տնօրեն՝ **Արա Խաչատրյան**	**Տնօրեն՝**
_____	_____

Հավելված 2
Կից՝ էքսել ֆայլ

ՎԱՃԱՌՔԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ, ՏՎՅԱԼՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ